# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2024թ. թիվ 973-Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 30 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 386-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 567-Ն որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2010թ. հոկտեմբերի 26-ի թիվ 386-Ա որոշմամբ հաստատված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 30 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը շարադրել և հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 2.2 կետի:

2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 30 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի տնօրեն Լիանա Բաբայանին՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 30 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-11-22 14:04:11 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. նոյեմբերի 22
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 դեկտեմբերի 2024թ. թիվ 1012-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 973-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2024թ. նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Պարույր Սևակի անվան թիվ 30 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 386-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 973-Ա որոշման վերնագրում, որոշման 1-ին և 2-րդ կետերում և որոշմամբ հաստատված կանոնադրության մեջ «Պարույր Սևակի անվան» բառերը փոխարինել «Պ.Սևակի անվան» բառերով:

Recoverable Signature

X

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-12-05 18:30:14 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Signed by: GHAZARYAN ARAM 2003720081 Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 5

ք.Վանաձոր